Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության

«06» «սեպտեմբերի» 2019թ.

թիվ 167/03-06.09.19որոշմամբ

Վարչության նախագահ

---------- Ա. Խաչատրյան

Ուժի մեջ է մտնում 09.09.2019թ.

Հրապարակման ամսաթիվը «09» «սեպտեմբերի» 2019թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար՝
Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
<<ԿԱՄԱՎՈՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ>> ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ

ԵՐԵՎԱՆ 2019

Անվանումը - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե – Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1 Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am Կայք - www.aeb.am
Հեռախոս - (37410) 8686, (37410) 510-910 (9104)
Ֆաքս - (37410) 53-89-04

1. Կամավոր Կուտակային ավանդը (այսուհետ՝Ավանդ) կարող է ներդնել յուրաքանչյուր չափահաս անձ:
2. Ավանդը ներդրվում է 5 տարի ժամկետով և ժամկետի ավարտին ավանդատուի կողմից ետ չպահանջվելու դեպքում համարվում է երկարաձգված նույն ժամկետով (առավելագույնը 20 տարի ժամկետով), բանկում տվյալ պահին տվյալ ավանդատեսակի համար գործող պայմաններով:
3. Ավանդը ներդրվում է սույն ամփոփագրով նշված պայմաններն ապահովելու դեպքում՝ հետևյալ արժույթներով և տոկոսադրույքներով,

Ներգրավման ժամկետ /տարի/	Տարեկան տոկոսադրույք	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
5	9.0%	3.50%

-տարին ընդունելով 365 օր, նահանջ տարվա համար 366 օր

Ներգրավման ժամկետ /տարի/	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
5	9.31%	3.55 %

- տարին ընդունելով 365 օր

*Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n — 1$$

Որտեղ՝

1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:
2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:
3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ. ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ՝ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ www.aeb.am »

4. Սույն ամփոփագրի 3-րդ կետով նախատեսված տոկոսագումարը հաշվարկվում է հետևյալ պայմաններով՝

4.1 Ավանդը ներդնելու հաջորդ ամսվանից սկսած մինչև Ավանդը վերադարձնելու նախորդ ամիսը Ավանդին պետք է ավելացվի Ավանդի չափով հաստատուն գումար (ներդրված սկզբնական Ավանդի գումարից ոչ ավել և ոչ պակաս), ամսական կտրվածքով՝ մեկ տարվա ընթացքում ոչ պակաս 7 ամիս (սույն տոկոսը չի հաշվարկվում, եթե մեկ տարվա ընթացքում Ավանդին չի ավելացվել հաստատուն գումար 5 /հինգ/ անգամից ավելի):
4.2. Ավանդի ներդրման նվազագույն մեծությունը 20,000 ՀՀ դրամ կամ 50 ԱՄՆ դոլար է, իսկ առավելագույն մեծության սահմանափակում չկա:
Ավանդին ավելացվող հաստատուն գումարը ավանդի գործողության ժամկետի ընթացքում փոփոխման ենթակա չէ:
5. Ավանդի տոկոսագումարը եռամսյակը մեկ կապիտալացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի, ապրիլի, հուլիսի և հոկտեմբերի 10-ին, և դրանց վրա շարունակվում են հաշվարկվել սույն ամփոփագրի 3-րդ կետով սահմանված տոկոսները:

- ավանդատուի ցանկության դեպքում արտարժույթով արտահայտված տոկոսագումարը վճարվում է ՀՀ դրամով՝ տոկոսագումարի վճարման օրվան նախորդող օրը ՀՀ արժութային շուկայում ձևավորված արտարժույթի միջին փոխարժեքով:

6. Ավանդը կամ դրա մի մասը մինչև Ավանդի պայմանագրի ժամկետի լրանալը պահանջելու կամ սույն ամփոփագրի 4.1. կետով սահմանված պայմանով Ավանդը չավելացվելու դեպքում՝ սույն ամփոփագրի 3-րդ կետերով և 5-րդ կետով սահմանված տոկոսագումարի փոխարեն ավանդի կամ պահանջվող մասի դիմաց հաշվարկվում և վճարվում են տոկոսագումարներ՝ Բանկում ցպահանջ ավանդի համար սահմանված տոկոսադրույքով:
7.Ցպահանջ ավանդի համար Բանկը հաշվարկում և վճարում է տոկոսագումար՝ տարեկան 0% տոկոսադրույքի չափով, եթե տոկոսադրույքի այլ չափ չի սահմանվում Բանկի Սակագներով:
8. Եթե ավանդը կամ դրա մի մասը պահանջվել են կամ Ավանդը չի ավելացվել սույն ամփոփագրի 4.1 կետի համաձայն Ավանդի պայմանագրի երկարաձգված ժամկետում, ապա նախորդ ժամկետի(ների) համար վճարվում են սույն ամփոփագրի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված տոկոսները, իսկ երկարաձգված ժամկետի համար ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում են տոկոսագումարներ 7-րդ կետի համաձայն:
9. Բանկն իրավունք ունի փոփոխել ցպահանջ ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքը:
10.Բանկն առնվազն երեսնօրյա պարբերականությամբ ներդրողին (ավանդատուին) տրամադրում է իր ավանդային հաշվի վերաբերյալ քաղվածք ավանդային պայմանագրով սահմանված եղանակով, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել, բացի այդ ավանդատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրում է հաշվի քաղվածք բանկի հայտարարած Սակագներով:

Հաշվարկի օրինակ.

ՀՀ դրամով ավանդ, ներդրում և ամսական համալրում՝ 20,000 ՀՀ դրամ, ներդրման ամսաթիվ՝ 08.04.2019թ.

5 տարի ժամկետով՝ 9.0% տարեկան տոկոսադրույք	
Կուտակված ապագա գումար	Այդ թվում՝ ստացվելիք տոկոսագումար
1,480,165.57	280,165.57

ԱՄՆ դոլարով ավանդ, ներդրում և ամսական համալրում 50 ԱՄՆդոլար, ներդրման ամսաթիվ՝ 08.04.2019թ.

5տարի ժամկետով՝ 3.5 % տարեկան տոկոսադրույք	
Կուտակված ապագա գումար	Այդ թվում՝ստացվելիք տոկոսագումար
3,251.45	251.45

- Հաշվարկներում ավանդի ամսական համալրումը կատարվում է ավանդը ներդնելու հաջորդ ամսվանից սկսած մինչև ավանդը վերադարձնելու նախորդ ամիսը յուրաքանչյուր ամսվա 10-րդ օրացույցային օրը, տոկոսագումարի հաշվարկը կատարվում է տարին հիմք ընդունվելով 365 օր, ընդ որում տոկոսագումարը հաշվարկված է հաշվի առած եկամտահարկը:

11.Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդի միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հիմնավոր պատճառներ, Բանկի կողմից կարող են կիրառվել այլ սակագներ և դրույթներ, որոնք սահմանվում են այլ փաստաթղթերով և (կամ) լրացուցիչ կնքվող պայմանագրերով, համաձայնագրերով:
12.Այլ անձանց կողմից ավանդատուի ավանդը օգտագործելու կամ տնօրինելու լիազորությունները ընդունվում են, եթե լիազորությունը տրվել է նոտարով վավերացված լիազորագրով կամ բանկում անձամբ ավանդատուի կողմից' բանկի աշխատակցի ներկայությամբ և հաստատումով ձևակերպված և ստորագրված' գրավոր լիազորագրով:
13.Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում ավանդատուն գրավոր դիմում է բանկին և 10 աշխատանքային օրվա ընթացքում ավանդատուին տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան:
14.Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում ավանդատուն իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:
15.Ավանդի վճարվող տոկոսագումարը ենթակա է հարկման «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով:
16. Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.

- միայն ՀՀ դրամով բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է,
- միայն արտարժութային բանկային ավանդների դեպքում երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է,
- ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը մեծ է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է միայն դրամային բանկային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով,
- ՀՀ դրամով և արտարժույթով բանկային ավանդների դեպքում, եթե դրամային բանկային ավանդը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն

ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով: